

## Տավուշի սահմանամերձ գյուղերում ՄՄԱԲԹ ապահով սենյակներ կան

**ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, 15.09.2016 - Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) Տավուշի մարզի Այգեհովիտ և Կոթի գյուղերում ՄՄԱԲԹ ապահով սենյակներ բացեց:**

Հայաստանում եզակի այս սենյակները յուրահատուկ կրթական անկյուններ են, որոնք բացի ուսումնական իրենց նշանակությունից, նաև անվտանգ տարածքներ են՝ հետաքրքիր լուծումներով: Ծրագրի հիմնական նպատակն է այս տարածաշրջանում ապրող երեխաներին ու երիտասարդներին հնարավորություն տալ ապահով ու տեխնոլոգիապես հագեցած տարածքում օգտվել ժամանակակից կրթական միջավայրի առավելություններից:



Հայաստանի մանուկներ հիմնադրամի գործադիր տնօրեն **Անուշ Եղիզարյանը** ողջույնի խոսքում նշեց. «ՄՄԱԲԹ ապահով սենյակները նախագծված են այնպես, որ անհրաժեշտության դեպքում ապաստարան դառնան համայնքի բնակիչներին, այնուամենայնիվ, մենք հույս ունենք, որ այն ծառայելու է խաղաղ ժամանակներին ու երեխաների համար նորագույն գիտելիքներ, հմտություններ ստանալու օջախ է դառնալու»:



ՄՄԱԲԹ ապահով սենյակների ծրագրային բովանդակությունը տարբերվում է Լոռու մարզում հիմնադրված և գործող ՄՄԱԲԹ սենյակներից նրանով, որ հաստուկ շեշտադրում ունի անվտանգության ուսուցման մասով: Դասընթացների հիմնական մասնակիցները կլինեն միջին ու բարձր դասարանցիները, կներգրավվեն նաև դպրոցը և նույնիսկ բարձրագույն ուսումնական հաստատություններն ավարտած երիտասարդները: Այդուհանդերձ, կրթական այս միջավայրում ծրագրային ցանկից կարող են օգտվել նաև մեծահասակները:



Ներքոնշյալ ծրագրերը կազմում են ՄՄԱԲԹ ապահով սենյակների ծրագրային հենքը.

- Համակարգչային գիտելիքներ
- Անգլերեն և հաղորդակցային հմտություններ
- Բարձր տեխնոլոգիաներ (ռոբոտիկա, կոդավորում, ծրագրավորում)
- Առաջին օգնություն
- Առաջին հոգեբանական աջակցություն
- Մեդիագրագիտություն
- Ռիսկերի ու աղետների կառավարման հմտություններ



Կոթի համայնքի ղեկավար **Ֆելիքս Մելիքյանը** ևս կարևորեց ՄՄԱԸԹ սենյակում ապահովության համադրությունը կրթությանը՝ հույս հայտնելով, որ բազմաթիվ ընտանիքներ, ովքեր մտահոգված էին երեխաների զարգացման հարցերով, սրա շնորհիվ որոշում կկայացնեն չմեկնել Կոթիից:

Հայաստանի մանուկներ հիմնադրամի նպատակը Հայաստանի գյուղերը հզորացնելն է, սահմանամերձ համայնքներում երկարաժամկետ ու հիմնարար փոփոխություններ բերելը: Տավուշի սահմանային գյուղերում ծրագիր իրականացնելը Հիմնադրամի առաքելության ու ռազմավարության մի մասն է և այսօրվա ծրագրային հրատապ նպատակներից մեկը:

ՄՄԱԸԹ ապահով սենյակների բացման արարողությանը ներկա էին ՀՀ Արտակարգ իրավիճակների և Պաշտպանության նախարարությունների, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչներ, հասարակական կազմակերպություններ, տեղական իշխանություններն ու Հայաստանի մանուկներ հիմնադրամի գործընկերները: Հայ առաքելական եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ գերաշնորհ **Բագրատ Եպիսկոպոս Գալստանյանը** տնօրինեքի կարգ կատարեց ՄՄԱԸԹ ապահով սենյակների համար՝ բարձր գնահատելով Հիմնադրամի նախաձեռնությունն ու իրագործած գաղափարները:

\*\*\*

*Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների ավելի քան 67,000 բնակիչները:*

*2015 թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՄՄԱԸԹ նախաձեռնություն: ՄՄԱԸԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՄՄԱԸԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:*